

ՕՏԱՐԱԿԱՆԸ

Քեթել մազերը հովին, լայն իր պատմունանին մեջ խառնած — այնքան էիչ է իրմեն երեւցած մասը — կը բալէ ան ափունքն ի վեր լնակին, ուրկէ արեւը բաւեր է իր ուռ-կանները:

Հոն է մեծաւոր ձկնորսը բարի կուտին, ուռկանները իրեն բարձր բաւ: Քեթել մազերը հովին, ան կը դնէ ձեռքը ձկնորսի ուսին: — Նայեցա՞մ անոնք իրարու: Մեկուն աչեւեւ լոյսի կտորներու պէս կարծես բաւեր կը փրթին, միւսին աչքը նման էր արօի մը՝ ուր հունձը կ'իյնայ:

— Ինչո՞ւ ես նստեր ուռկաներուդ:

— Լաւագոյն է նստիլ փորձանքին վրայ, քան նակաս բանալ անոր: Ուժովցաւ հովը եւ մեծկակ կտոր մը շուրի նետեց ոսկեթել պատմունանի փեշին: Օտարականը քթուեց փեշը ու նայեցաւ ծովուն որ սակաւ կը խողաղէր: Արեւը մաշած դրամի նման կ'իջնէր հորիզոնին, ոսկեզօծելով հեռաւոր ափունքները լնակին:

Առտուրնէ ի վեր հոս եմ, ու սակաւին ձուկ մը իսկ չեմ որսացած: Մովը անհաւա-տարիմ է տփացած պերճադիւնի մը պէս. ուզենք կամ ոչ, պիտի ջանինք իր փայլները:

— Մովը կեանքն է ըստ Օտարականը եւ ձուկերը մեր երազները:

— Ապա ուռկա՞մը՝ հարցուց ձկնորսը, տեսնէն հայելով Օտարականին:

— Մեր օրերը, երանի անոր որ օրերու ուռկանով կեանքի ծովէն մեռած չի հաներ իր երազները, ինչպէս դուն կը հանես ձուկերը ծովէն: Ամէն մարդ իր երազը ունի, եւ ամէն մարդ ուռ կամ կանուխ զայն պիտի որսայ մեռած:

— Աստուած ամէն բան իմաստութեամբ է տնօրինէր, ըստ ձկնորսը:

— Անտարակոյս յարեց միւսը, եւ ամէն մարդ աշխարհ կուգայ այն լաւաշադրու-թեամբ թէ ինք գործակից է Աստուծոյ, որ սակաւին չէ յուսահատած մարդէն: Եւ ռակայն ամէն մարդ իր մահէն առաջ, իր աստուածն է որ կը թաղէ. անա թէ ինչու ըսի թէ կեանքի ծովէն ամէն մարդ իր մեռած երազն է որ կ'որսայ: Մուր էր արդէն եւ ձկնորսը մոռցած կը թուէր ժամանակն ու իր ուռկանը:

Լռեց Օտարականը ու երկնին նայեցաւ, անոր հետեւեցաւ ձկնորսը:

— Կը տեսնե՞ս իսաւարի անեսանելի բոցը որուն կայծերն են աստղերը:

— Կը հաւատամ, ըստ ձկնորսը, թէ կայ Մեկը այս աստղերու ետին, որ կ'առաջ-նորդէ մեր փայլերը խաւարէն ու անծանօթէն: Միմակ են անոնք միայն, որոնց տեսնու-նք երբեւ համբան չարքնմար իրենց արօին մեղեդիովը:

— Գեղեցիկ են քու խօսքերդ, ազնիւ Օտարական, բայց անոնք խոր են ու հեռաւոր, նման ալիքներու խեղդուած ձայնին:

— Թափ տուր հոգիդ մեռած խօսքերու փոքին, լուսա զայն լռութեամբ եւ դուն կը լսես Մեն համերգը երկններու:

— Մովին երգն ալ բաղըր է, երբ խաղաղ է ան ու երբ ձուկերը մօտ են ափին:

— Կեանքի ծաղիկին թերթերը փրցնելով չէ սակայն որ մենք կ'ընանք հաւաքել իր գեղեցկութիւնները:

*

Գիշեր էր արդէն, անծանօթը հրաժեօտ առաւ՝ ու մեկնեցաւ դէպի մերձեկայ օնակին լոյսը: Ձկնորսը անգիտակից տարժուով ջուրին նետեց ուռկանը, բռնելու համար գոչեց այն՝ որ իրմէն կ'իյնար այսպէս ծովին ու մութին մեջ:

Ե.